ՏԱԹԵՎԻԿ ՇԱԽԿՈՒԼՅԱՆ. Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891–1899), *Երևան, «Ամրոց գրուպ», 2014, 192 էջ:*

Կոմիտասը դարակազմիկ երևույթ է, հայ երաժշտական մշակույթի այն բացառիկ երախտավորը, ում մասին գրվել և շարունակվում են գրվել աննախադեպ թվով հետազոտություններ, մենագրություններ, ատենախոսություններ, ժողովածուներ, հոդվածներ, հուշագրություններ, գեղարվեստական գործեր: Դրանց մեծաքանակությունն արդեն պայմանավորել է հայրենական երաժշտագիտության կարևոր ճյուղերից մեկի՝ կոմիտասագիտության սկզբնավորումն ու զարգացումը:



Եվ, այդուամենայնիվ, առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել Կոմիտասի ստեղծագործական ժառանգության վաղ շրջանը՝ 1891–1899 թթ.: Խնդրո առարկա շրջանի մասին եղած ուսումնասիրությունները (Ռ. Աթայանի, Գ. Գյոդակյանի, Ռ. Շեսկուսի, Մ. Հարությունյանի և ուրիշների) վերաբերում են գլխավորապես Կոմիտասի կյանքին և գործունեությանն՝ ընդհանուր ընդգրկումով, իսկ կոմպոզիտորի ստեղծագործությունները հազվադեպ են քննարկվում՝ նշվում են մի քանի ստեղծագործություններ միայն, այնինչ դրանց քանակն ավելին է:

Եվ ահա՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերի շրջանակներում լույս է ընծայվել ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանի «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891–1899)» ուսումնասիրությունը՝ երիտասարդ հետազոտողի անդրանիկ մենագրությունը:

Գրախոսվող մենագրության մեջ, որի հիմքում Տ. Շախկուլյանի թեկնածուական ատենախոսությունն է, հեղինակն իր առջև նպատակ է դրել բացահայտել այն ճանապարհը, որը Կոմիտասին բերել է գիտական ինքնատիպ մտածողության և յուրահատուկ կոմպոզի-

տորական ստեղծագործության: Խոսքը վերաբերում է գեղագիտական, գեղարվեստական և տեխնիկական նախընտրություններին: Այդ նպատակով նա դիտարկում է հեղինակային մոտեցման փոփոխությունները ինչպես մեկ ժանրի, այնպես էլ ընդհանուր ոճի շրջանակներում:

Իր ուսումնասիրությունների արդյունքում երիտասարդ հետազոտողը բացահայտում է, որ Կոմիտասի ստեղծագործական գրելաոճի մի շարք բնորոշ տարրեր դրսևորվում են դեռևս վաղ շրջանից, ապացուցում, որ Բեռլինում ուսումնառության շրջանում Կոմիտասի ոճը չի սահմանափակվում արևմտաեվրոպական երաժշտության յուրացմամբ: Ըստ էության, նա գրում է երկու տարբեր ուղղություններով, որոնցից մեկը ենթադրում է եվրոպական երաժշտության նորմերի կիրառություն, մյուսը՝ երաժշտության ինքնատիպ կազմակերպում ազգային մոնոդիկ ավանդույթների հիման վրա:

Հետազոտության համար հիմք են ծառայել Կոմիտասի տպագիր գործերը (Երկերի ժողովածու, հ. 1–14, Երևան, 1960–2006 թթ.), ինչպես նաև Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Կոմիտասի արխիվում պահվող ձեռագրերը: Ուսումնասիրելով ԳԱԹ-ի Կոմիտասի դիվանում պահվող հեղինակային ձեռագրեր՝ Տ. Շախկուլյանը գիտական շրջանառության մեջ է դնում դրանց մի մասը՝ հավելվածում ներկայացնելով նախկինում երբևէ չտպագրված մի շարք նոտային օրինակներ:

Տ. Շախկուլյանը Կոմիտասի ստեղծագործական վաղ շրջանը դիտարկում է ոչ միայն որպես կենսագրական, այլև ստեղծագործական փուլ, որի ընթացքում ձևավորվել են նրա ստեղծագործական ոճի կարևոր հատկանիշներ: Վաղ շրջանն էլ ներկայացվել է ենթափուլերով:

Հեղինակը համակարգված ուսումնասիրել է խնդրո առարկա շրջանում գրված, ներկայումս մատչելի ստեղծագործությունները, քննության առել Կոմիտասի գրելաոճի զարգացումը 1890-ականների սկզբից մինչև 1899 թ., դիտարկել նրա մոտեցման փոփոխությունները թե՛ միևնույն ժանրի շրջանակներում, թե՛ ոճի մասշտաբով առհասարակ: Քննության առնելով տարբեր ժանրերում գրված մի շարք ստեղծագործություններ՝ Տ. Շախկուլյանը դուրս է բերել ոճական առանձնահատկություններն ըստ երաժշտական տարբեր բաղադրիչների՝ մեղեդային գիծ, մետրառիթմ, հարմոնիա, պոլիֆոնիա, խոսքի ու երաժշտության հարաբերակցություն և այլն, ուսումնասիրել Կո-

միտասի ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր ավարտուն ու անավարտ ստեղծագործություններ, որոնց մի մասն ասպարեզ է հանվել և ուսումնասիրվել առաջին անգամ:

Երաժշտագետը գիտական շրջանառության մեջ է դնում հեղինակային ձեռագրեր, որոնց մի մասը նախկինում երաժշտագիտական գրականության մեջ առանձին դեպքերում նշվել է, բայց չի քննարկվել, այդ թվում՝ Կոմիտասի մի շարք գործիքային ստեղծագործություններ, գերմանալեզու խմբերգեր, նվագախմբային ստեղծագործությունը, խմբերգերի վաղ տարբերակներ: Ստեղծագործություններից մի քանիսն առաջին անգամ են ուսումնասիրվում. խոսքը գերմանալեզու մի մեներգի, դաշնամուրային ավարտուն և անավարտ մի քանի գործերի, գործիքային մի քանի պիեսների, հոգևոր երգերի մշակումների տարբերակների մասին է: Նշված գործերի մի մասն անավարտ լինելու պատճառով չի ընդգրկվել Կոմիտասի Երկերի ակադեմիական ժողովածուի մեջ: Սակայն, ըստ այդ ուրվագրերի, էսքիզային հատվածների՝ Տ. Շախկուլյանը հետազոտել է տվյալ ժամանակաշրջանում Կոմիտասի երաժշտական մտածողությունը և հետագա կատարելագործման ընթացքը:

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, հինգ գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և նոտային օրինակներ պարունակող հավելվածից: Առաջին գլուխը՝ «Կոմիտասի ստեղծագործական վաղ շրջանը», ներկայացնում է Կոմիտասի կենսագրական հանգամանքները, այդ թվում՝ Բեռլինում ուսանելու տարիները, բանահավաքչական գործունեությունը, երաժշտագիտական աշխատանքն ու հայացքները:

Երկրորդ՝ «Պատարագի երգեցողությունների կոմիտասյան առաջին մշակումները» գլխում հեղինակը քննության է առել «Ա» Պատարագը՝ Պատարագի մշակման առաջին փորձը, «Բեռլինյան»՝ «Բ» Պատարագը և Կոմիտասի մշակած «Երրորդ» Պատարագը:

Երրորդ «Խմբերգային ստեղծագործությունները» գլխում Տ. Շախկուլյանն առանձին ենթագլուխներում անդրադարձել է հոգևոր, գեղջկական և ազգային-հայրենասիրական երգերի մշակումներին, քաղաքային երգերին ու ինքնուրույն ստեղծագործություններին, ինչպես նաև գերմաներեն խմբերգերին:

«Մեներգային ստեղծագործություններ» խորագիրը կրող չորրորդ գլխում հեղինակը ներկայացրել է գերմաներեն երգերը:

Հինգերորդ գլուխը՝ «Գործիքային ստեղծագործություններ», նվիրված է Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործություններին, գործիքային անսամբլներին և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Walde Nacht»-ին («Անտառային գիշեր»): Հեղինակի կարծիքով՝ Կոմիտասի ձեռամբ Op. 1 նշումով Նոկտյուրնը «շարունակում է դասական, մասնավորապես՝ հասուն ռոմանտիզմի նոկտյուրնի ավանդույթները՝ մեղեդային գծի շարադրման սկզբունքով, բնույթով, ֆակտուրայով, ձևով (էջ 103): Հեղինակը վերլուծում է դաշնամուրային «Սգո քայլերգը», «Մենուետը», «Երազը» և «Չորս դաշնամուրային պիեսները», ինչպես նաև լարային կվարտետներն ու կվինտետը: «Կոմիտասի պարտիտուրը սիմֆոնիկ նվագախմբի համար. «Walde Nacht» («Անտառային գիշեր»)» ենթագլխում Տ. Շախկուլյանը իրավացիորեն նկատում է, որ «սիմֆոնիկ պարտիտուրը Կոմիտասի կենսագրության մեջ պատմական փաստ լինելուց բացի, նաև ուշադրության արժանի ստեղծագործություն է, որը կարող է նաև համերգային կյանք ունենալ» (էջ 121):

Ակնհայտ է աշխատության գործնական ուղղվածությունը: Մենագրության հավելվածում հեղինակն առաջին անգամ երաժշտական հանրությանն է ներկայացնում տվյալ շրջանի Կոմիտասի անտիպ գործեր, այդ թվում՝ 3 քառաձայն գերմաներեն խմբերգ, 9 գերմաներեն մեներգ, Նոկտյուրնը դաշնամուրի համար, Կոմիտասից պահպանված միակ նվագախմբային երկը՝ «Walde Nacht»-ը: Կարծում ենք, որ դա խթան կհանդիսանա, որպեսզի հայ և ոչ միայն հայ կատարողները՝ երգիչները, դաշնակահարները, խմբավարներն ու դիրիժորները, տեղեկանան այդ ստեղծագործությունների գոյության մասին, կատարեն դրանք ու ներառեն իրենց նվագացանկում: Ավելորդ չենք համարում նշել, որ դրանց ձայնանիշերի համակարգչային շարվածքը ևս իրականացրել է գրքի հեղինակը:

Հայրենական երաժշտագիտության երիտասարդ սերնդի խոստումնալից ու հեռանկարային ներկայացուցիչներից մեկի՝ Տ. Շախկուլյանի սույն մենագրությունը, անշուշտ, նոր խոսք է կոմիտասագիտության ասպարեզում և արժեքավոր ներդրում հայ երաժշտագիտության բնագավառում:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ